Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-1163[1]-04.02.2017,17.02.2017-ՏՀ-010/2

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 188 հոդվածում.

1) 4-րդ մասում «վերահսկողության» բառը փոխարինել «վերահսկողություն իրականացնող» բառերով, «գլխավոր պետական տեսուչի եւ պետական տեսուչների» բառերը՝ «մարմնի ղեկավարի կամ ծառայողի» բառերով:

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«Առանց հավատարմագրման, հավատարմագրումը կասեցված եւ դադարեցված լինելու դեպքում համապատասխանության գնահատման մարմինների կողմից հավատարմագրման նշանի եւ (կամ) հավատարմագրման վերաբերյալ տեքստային վկայակոչման կիրառումը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ երեքհարյուրապատիկի չափով:»

Հոդված 2. Օրենսգրքի 244^7 -րդ հոդվածը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 244^7 . Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարությունը.

1. Սույն օրենսգրքի 95^3 հոդվածով, 158 հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 23-րդ, 24-րդ եւ 26-րդ մասերով, 188 հոդվածով (բացառությամբ 3-րդ մասի) եւ 189^1 հոդվածի 1-4-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում եւ վարչական տույժեր է նշանակում Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը:

2. Սույն օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասով, 158-րդ հոդվածի 28-րդ մասով, 169.25 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում եւ վարչական տույժեր է նշանակում Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարը կամ նրա կողմից լիազորված Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության աշխատակազմի պաշտոնատար անձը (անձինք):»:

Հոդված 3. Օրենսգրքի 219.1-րդ հոդվածի 2-րդ մասում «21-րդ» բառից հետո լրացնել «23-րդ» բառը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: